ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆԱԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նաիրի համայնք,
ք. Եղվարդ, Երևանյան 1, Հեռ. (0224) 2-11-10, eghvard.city@gmail.com

N Ե-3577
22 սեպտեմբեր 2025թ.

<<ԼԱՅՆ ԱՓ>> ՍՊԸ-Ի
ՏՆՕՐԵՆ Գ. ՄԵՍՐՈՊՅԱՆԻՆ

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ

Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

Նաիրիի համայնքապետարանի և <<ԼԱՅՆ ԱՓ>> ՍՊԸ-ի միջև կնքված <<ԿՄՆՀ-ԲՄԱՇՁԲ-22/6>> ծածկագրով կապալային աշխատանքների կատարման պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետում կատարել սույն պայմանագրի N1 հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով ավտոկայանատեղիի նոր շինության կառուցման աշխատանքները, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքները և վարձատրել դրա համար:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ <<Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը>>:

Պայմանագրի 3.1.4 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառած վնասը, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետը /ներառյալ օրացուցային գրաֆիկը/.

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքների թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները:

Պայմանագրի 1.3 կետի համաձայն՝ <<Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ համաձայն հավելված 2 -ի:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերությունը խախտել է Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետը՝ Պատվիրատուն՝ Նաիրիի համայնքապետարանի աշխատակազմը, ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակառոմանի հրաժարվում է Պայմանագիրց լրիվ՝ համարելով այն լուծված:

Պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կկիրառվի ՀՀ կառավարության 2017թվականի մայիսի 4-ի N526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

<<Գնումների մասին>> օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերի ի հայտ գալու դեպքում, պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ն.ՍԱՐԳՍՅԱՆ

Կատ.՝ Վ. Վիրաբյան
0224 2-20-24